

ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի շնորհավորական ուղերձը կանանց միջազգային օրվա առթիվ

Սիրելի՛ հայուհիներ

Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ գարնանային այս տոնի կապակցությամբ: Անուրանալի է ձեր ավանդը մեր կյանքի բոլոր բնագավառներում: Այսօր պարզապես առիթ է ևս մեկ անգամ բոլորիդ ասելու՝ շնորհակալություն: Կյանքի հորձանուտում, հաճախ արժանվույն չեն գնահատվում բոլոր նրանք, ովքեր իսկապես արժանի են մեծարանքի: Հավատացնում եմ, որ արվելու է ամեն ինչ, որ ձեզ զգաք մեր երկրի լիիրավ քաղաքացի ու անմասն չմնաք հայրենիքաստեղծ գործընթացից: Գեղեցիկը գնահատելու համար պաշտոնական օրեր չպետք է լինեն, որ կարևորենք մեր մայրերին ու քույրերին, այդուհանդերձ կցանկանամ, որ բոլորիդ համար այս օրը աննկատ չանցնի, ձեզ զգաք սիրված ու ինքնաբավ: Շնորհավո՛ր մարտի ութ:

Հարգանքով՝ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյան